Ծանոթ. Խաչքարը գտնվում է Ախթալայի վանքից բավական հեռու և չի կարող վերաբերել գլխավոր եկեղեցու կառուցմանը: Հողհատ, թերևս, պետք է ընդունել ոչ թե գերեզմանավոր, շիրմատեղ վայրը, այլ հողը անտառից, թփուտներից մաքրող, հանքափոր: Պ. Մուրադյանի կարծիքով՝ *հողափոր, հանքափոր:* Բայց այստեղ այն տեղանուն է, իսկ Ս. Ատովածածին՝ այս խաչքարի անունն է: Թե ինչ հիմանք է *հողհատը* մեկնվել «քեզ լանջերով և ձորերով եզերված հողամաս» (Բ. Առաքելյան)՝ դժվար է բացատրել: Նկատի ունենալով հարցի կարևորությունը, ուշադրություն ենք հրավիրում նաև *հողը հատածը վերջացած* կապակցությանը, ինչպես՝ այգեհատ:

Բ. Առաքելյանի մեկնությունը Ս. Սարգսյանը մեջբերել է Ա. Շահինյանից, որը չի նշել հրատարակությունը (խմբ.):

Շ Ա Մ Լ Ո Ւ Ղ

Գտնվում է Ախթալայից 4 կմ հյուսիս-արևմուտք, համանուն գետի ձախ ափին, Ալավերդուց 6 կմ հյուսիս-արևելք:

549. ԽԱՉՔԱՐ. Եկեղեցու մոտ, գերեզմանոցում, քիվին 2 տող.



ՍԲ ԽԱՉՍ ԲԱՐԷԽԱԷ
Ս Է ԿԻՐԱԿՈՍԻՆ ԵՒ ՃՆԱՀՂԱՑՆ:

Ծանոթ. Խաչքարը կոտրատել, երեք մասի են բաժանել: Մակերեսը չափազանց մաշված-քայքայված է, գրերը՝ դժվարընթեռնելի: Ժէ դարի գործ է:

550. ԽԱՉՔԱՐ. Շամլուղի Բենդիկ բաղամասում, Ախթալա գետակի աջ ափին, հենած ավերակ մատուռի պատին, քիվին 2, խաչաթաղին 11, հարավային կողին 15 տող.



ՊԵՔ	ԿԱՄԱՒՆ ԱՅ ԱՄԵՆԱՅԿԱԼ-	ՐՊԵՔ
ԵՒԵՐԿ	ԻՆ, ԵՄ՝ ԿԱԼԵՑԻՍ, ԿԱՆԳՆ-	ԵՒ ԵՐԿՐ-
ԱՊԵ	ԵՑԻ	ՊԱՊԵ
ՔՅԱՂ	Զ-	Ք՝ ՅԱՂ
ԱՒԹՍ	ՍԲ Խ-	ԱՒԹՍ
ՅԻՇԵ	ԱՉՍ Յ-	ՅԻՇԵ-
ՑԵՔ	ԻՇԱՏ-	ՑԵՔ
Ի ՔՍ	ԱԿ	Ի ՔՍ:
ԻԹ	ԻՆՉ	Ի Թ-
ՈՒԻՍ	ԵՒ ՃՆ-	ՈՒԻՍ
ՁՃՁ	ՈՂԱՑ	Զ:Ճ:Ղ:
Դ:ԿԱ	Ի-ՄՈՑ: ՈՐ-	Դ: (1245) ԿԱ
ՆԳՆ	Ք ԿԱ-	ՆԳՆ-
ԵՑԽ	ԵՑ ԽԱ-	ԱՉՍ:
ԱՉՍ		

Ծանոթ. Այստեղ կան հիշատակագրություններ ունեցող երկու խաչքարեր, որոնց արձանագրությունները չեն ընդօրինակվել: Թիվը վերծանվել է Զ(6)+Ճ(100)+Ղ(90)+ +Դ(4)=1245, որպիսիք պատահում են թե վիմագրերում և թե ձեռագրերում: